հայերը իզուր են հաւատում, որ գինին ու հացը Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնն են դառնում:

Ես ոչինչ չպատասխանեցի ու հեռացայ: Նա մինչեւ անգամ վիրաւորուեցաւ իմ անտարբերութիւնից, թէ ինչու ես չկանգնեցի բազարի մէջտեղում եւ ամբողջ ժամերով չվիճեցի նրա հետ գոյափոխութեան վրայ:

Ես գնեցի ինչ որ պէտք էր ինձ եւ վերադարձայ պանդոկը:

Ասլանը եւ Ջալլադը ամբողջ օրը չերեւացին: Երեկոյեան, մեր սենեակում միայնակ նստած, սպասում էի նրանց: Մի կողմում վառւում էր աղիւսի վրայ կպցրած ճրագի մոմը եւ տարածում էր մռայլ լուսաւորութիւն: Պանդոկում բոլոր վաճառականների կրպակները կողպուած էին, եւ ամէն գործողութիւն դադարած էր: Տիրում էր խորին, թախծալի լռութիւն: Մի քանի ճանապարհորդներ, մեր կից սենեակների դռների առջեւ նստած, ընթրիք էին անում: Ոմանք դռների առջեւ քնած էին: Ներսում տօթը հեղձուցիչ էր: Ես նայում էի վառողող մոմի վրայ: Անթիւ միջատները, փոքրիկ, նախշուն թիթեռները, սուլելով, սաւառնելով, պտտում էին մոմի շուրջը: Լոյսը հրապուրում էր նրանց: Լոյսը ուրախացնում էր նրանց: Լոյսի հետ խաղ էին անում, եւ լոյսի մօտ ընկնում էին... Լուսաւորութեան խե՜ղճ զոհեր...

Ասլանը եւ Ջալլադը վերադարձան խիստ ուշ: Մեծ եղաւ իմ ապշութիւնը, երբ տեսայ Ջալլադին՝ ոտից գլուխ կերպարանափոխուած: Նա այժմ եւրոպական հագուստ էր հագած: Որքա՜ն պատկառելի էր երեւում նա այդ հագուստի մէջ, որքա՜ն պատշաճաւոր էր նրան այդ հագուստը: Երեւում էր, որ նա մանկութիւնից սնոել, մեծացել էր այդ հագուստով:

Նա ժպտալով ողջունեց ինձ եւ հարցրեց.

— Չե՞ս զարմանում:

— Զարմանում եմ, — պատասխանեցի ես, վեր կացայ իմ նստած տեղից, բռնեցի նրա ձեռքը:

Ասլանը գլխարկը մի կողմ ձգեց եւ լուռ նստեց օթոցի վրայ: Իսկ Ջալլադը սկսեց շտապով հաւաքել իր իրեղէնները: Սենեակի դռանը սպասում էր մի ծառայ: Նա ներս մտաւ, վեր առեց նրա խուրջինը եւ հեռացաւ:

— Դու գնո՞ւմ ես, — անհանգիստ կերպով հարցրի նրանից:

— Ոչ, ես չեմ գնում, — քաղցրութեամբ պատասխանեց նա եւ, մօտենալով, ձեռքը դրեց իմ ուսի վրայ: — Ես այդ քաղաքում պէտք է մնամ: Եւ այդ պատճառով, հարկաւոր եղաւ իմ իրեղէնները տեղափոխել իմ նոր վարձած կացարանը: